ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N 1209-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 18-ի «Պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Աջոնցի փողոցի N 6 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարանների վաճառքի կարգը հաստատելու մասին» N 1209-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 1-ին կետով հաստատված կարգի 16-րդ կետի 10-րդ ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«10) շինարարության ավարտից հետո ստորաբաժանված և հասցեավորված մասնաշենքերից մինչև 2019 թվականի հոկտեմբերի 30-ը ինքնուրույն գույքային միավոր բնակարանների հանձնում ընդունում պետությանը, և մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը առուվաճառքի հիմնական պայմանագրերի կնքում վերջինիս նշած անձանց (շահառուների) հետ»:

2) Որոշման 1-ին կետով հաստատված կարգի 16-րդ կետի 11-րդ ենթակետի «դ» պարբերության «կառուցապատողը պարտավոր է մինչև 2018 թվականի հունիսի 1-ը» բառերը փոխարինել «կառուցապատողը պարտավոր է մինչև 2018 թվականի նոյեմբերի 1-ը» բառերով:

- Որոշման 1-ին կետով հաստատված կարգի 28-րդ կետի 8-րդ ենթակետի «մինչև

2019 թվականի հուլիսի 31-ը» բառերը փոխարինել «մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: